



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՆՈՐ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ ԿԱԶՄԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ՝ Պալատ**) խորհուրդը, մասնակցությամբ Պալատի խորհրդի նախագահ Արա Զոհրաբյանի, խորհրդի անդամներ՝ Հրանտ Անանյանի, Մելանյա Առուստամյանի, Սեդրակ Ասատրյանի, Սիմոն Բաբայանի, Տիգրան Խուրշուդյանի, Հարություն Հարությունյանի, Նելլի Հարությունյանի և Կարեն Մեծլումյանի,

քննության առնելով «Հայաստանի Հանրապետության փաստաբանական դպրոց» հիմնադրամի (**այսուհետ՝ Փաստաբանական դպրոց**) նոր կառավարման խորհուրդ կազմավորելու մասին հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Պալատի խորհրդի 26.03.2015թ. թիվ 08/7-Լ որոշմամբ կազմավորվել է Փաստաբանական դպրոցի կառավարման խորհուրդ՝ մինչև 2018 թվականի մարտի 26-ը պաշտոնավարման ժամկետով:

«Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45.4 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *փաստաբանական դպրոցի կառավարման խորհուրդը կազմավորվում է փաստաբանների պալատի նախագահից և փաստաբանների պալատի խորհրդի կողմից փաստաբանական դպրոցի կանոնադրությամբ սահմանված կարգով նշանակված առնվազն չորս անդամից և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության մեկ ներկայացուցից:*

Փաստաբանական դպրոցի կանոնադրության 8.3. կետի համաձայն՝ *խորհուրդը բաղկացած է վեց անդամից: Խորհուրդը կազմավորվում է ՀՀ փաստաբանների պալատի նախագահից և ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի կողմից սույն կանոնադրությամբ սահմանված կարգով նշանակված չորս անդամից և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության մեկ ներկայացուցից:*

Փաստաբանական դպրոցի կանոնադրության 8.5. կետի համաձայն՝

07 ապրիլի 2018թ.
թիվ 7/11-Ա

խորհրդի չորս անդամներին նշանակում է ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդը՝ ՀՀ փաստաբանների պալատի նախագահի առաջադրմամբ՝ երեք տարի ժամկետով: Սույն կետում նշված չորս անդամներից առնվազն երեքը պետք է լինեն ՀՀ փաստաբաններ: Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության ներկայացուցչի թեկնածությունը ներկայացվում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի կողմից:

Փաստաբանական դպրոցի կանոնադրության 8.5 ենթակետի համաձայն՝ Պալատի նախագահի կողմից որպես Փաստաբանական դպրոցի կառավարման խորհրդի փաստաբան անդամներ առաջարկվել է փաստաբաններ Հունան Տեր-Վարդանյանի (արտոնագիր № 1108), Նիկոլայ Հակոբյանի (արտոնագիր № 414), Հերիքնազ Տիգրանյանի (արտոնագիր № 618) և Լեոնիկ Հովհաննիսյանի (արտոնագիր № 568) թեկնածությունները:

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի 30.03.2018թ. թիվ 01/52401-18 գրությամբ որպես Փաստաբանական դպրոցի կառավարման խորհրդում ՀՀ արդարադատության նախարարության ներկայացուցիչ առաջարկվել է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի առաջին տեղակալ Արթուր Հովհաննիսյանի թեկնածությունը:

Ելնելով վերոգրյալից և նկատի ունենալով այն հանգամանքը, որ Փաստաբանական դպրոցի՝ 26.03.2015թ. երեք տարի պաշտոնավարման ժամկետով կազմավորված կառավարման խորհրդի լիազորությունների ժամկետն ավարտվել է,

Պալատի խորհուրդը՝ ղեկավարվելով «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45.4 հոդվածի 2-րդ մասի, Փաստաբանական դպրոցի կանոնադրության 8.3 և 8.5 կետերի պահանջներով,

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Հայաստանի Հանրապետության փաստաբանական դպրոց» հիմնադրամի կառավարման խորհրդի փաստաբան անդամներ նշանակել՝

- փաստաբան, իրավաբանական գիտությունների թեկնածու Հունան Տեր-Վարդանյանին (արտոնագիր № 1108),
- փաստաբան Նիկոլայ Հակոբյանին (արտոնագիր № 414),
- փաստաբան Հերիքնազ Տիգրանյանին (արտոնագիր № 618),
- փաստաբան Լեոնիկ Հովհաննիսյանին (արտոնագիր № 568):

2. Սահմանել, որ «Հայաստանի Հանրապետության փաստաբանական դպրոց» հիմնադրամի կառավարման խորհուրդը կազմված է հետևյալ անդամներից՝

- 1) Արա Զոհրաբյան՝ կառավարման խորհրդի նախագահի պաշտոնե, ի.գ.թ.,
- 2) Հունան Տեր-Վարդանյան՝ փաստաբան, ի.գ.թ.,
- 3) Նիկոլայ Հակոբյան՝ փաստաբան,
- 4) Հերիքնազ Տիգրանյան՝ փաստաբան,
- 5) Լեոնիկ Հովհաննիսյան՝ փաստաբան,
- 6) Արթուր Հովհաննիսյան՝ ՀՀ արդարադատության նախարարության ներկայացուցիչ, ՀՀ արդարադատության նախարարի առաջին տեղակալ:

3. Սահմանել, որ «Հայաստանի Հանրապետության փաստաբանական դպրոց» հիմնադրամի կառավարման խորհուրդը կազմավորվում է երեք տարի ժամկետով՝ մինչև 2021 թվականի ապրիլի 7-ը ներառյալ:

4. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել Փաստաբանական դպրոցի տնօրենին և կառավարման խորհրդի նորանշանակ անդամներին:

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի
խորհրդի նախագահ՝

Արա Զոհրաբյան

**07 ապրիլի 2018թ.
թիվ 7/11-Ա
ք. Երևան**